ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՄԻՐ ՔԱՖԻԹԻԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ընդունելություն Մայր Տաճարում

Հայ Առաքելական և Անգլիկան Եկեղեցիների միջև բարեկամական հարաբերությունների առավել զարգացմանն ու խորացմանն էր նպատակաուղղված նաև դեկտեմբերի 6-ին Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանած Միջին Արևելքի երկրների Անգլիկան Եկեղեցու Երուսաղեմի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սամիր Քաֆիթիի այցելությունը:

Օդանավակայանում պատվավոր հյուրին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները և ուղեկցեցին Մայր Աթոռ, ուր Մայր Տաճարում Գեր. Տ. Սամիր Քաֆիթիին դիմավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը: Իջման Ս. Սեղանի առջև կարդացվեց կանոնական աղոթք, որից հետո բարիգալստյան խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: Անդրադառնալով Քենթրբերի վերջերս կատարած այցելությանը՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց Գեր. Տ. Սամիր Քաֆիթիի այցելությունը՝ Հայ Առաքելական և Անգլիկան Եկեղեցիների միջև կապերի ընդլայնման առումով: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց նաև Սրբազան Եպիսկոպոսի ունեցած դերը Արևելյան Եկեղեցիների միջև հարաբերությունների զարգացման առաքելության մեջ:

Վեհափառ Հայրապետը մասնավորապես ասաց.

«Հոգևոր եղբայրներ, հարգարժան անդամներ Գերագույն Հոգևոր Խորհրդի և սիրելի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ.

Մենք այսօր անհունորեն ուրախ ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունում ենք մեր սիրեցյալ եղբորը՝ Գերաշնորհ Տ. Սամիր Քաֆիթիին, որ պետն է Միջին Արևելքի Անգլիկան Եկեղեցիների և Երուսաղեմի առաջնորդը Անգլիկան Եկեղեցու: Նա մեզ երկար տարիներից, իր ուսանողության օրերից ծանոթ անձ է և այժմ մեծ դեր է կատարում այն տարածաշրջանում, որ աշխարհի համար ամենից դժվարին պայմանների տակ ապրող շրջաններից մեկն է՝ Միջին Արևելքը և Երուսաղեմը հատուկ կերպով: Ես ողջունում եմ նրան որպես մեր սիրեցյալ եղբորը մեր Մայր Աթոռում»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը անգլերեն լեզվով ողջունեց մեծահարգ հյուրին:

Գերաշնորհ Սրբազանը ողջույնի պատասխան խոսքում ասաց, որ շատ էր փափագում այցելել Ս. երկիր Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, և շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հրավերի համար: Անդրադառնալով դեռևս 1954 թվականին Լիբանանի Քրիստոնեական երիտասարդական միությունում իր առաջին հանդիպմանը Վեհափառ Հայրապետի հետ՝ նշեց նաև Նորին Սրբության մեծ ավանդը Էկումենիկ հարաբերություններում: «Ես գալիս եմ Երուսաղեմից, որտեղ հատուկ քրիստոնեական ողջունելու մի ձև ունենք, որը ընդունելի է համայն քրիստոնյա աշխարհում: Ասում ենք «Քրիստոս յարեաւ» և պատասխանը լինում է՝ «Իսկապէս և ճշմարտապէս յարեաւ»:

Վեհափառ Հայրապետի հետ մենք ծանոթացել ենք Լիբանանում, քրիստո-

նական երիտասարդաց միության մեջ: Դուք թողել եք ինձ վրա մեծ ազդեցություն հավատքի և կազմակերպման մեջ: Այդ ժամանակվանից իմ փափագն է այցելել Հայաստան: Ես ուրախ եմ, որ այսօր այդ երազանքը իրականացավ: Երուսաղեմում ես ինձ իմ հարազատ տանն եմ զգում լինելով Ս. Հակոբյան վանքի միաբանության հետ: Ավագ Հինգշաբթի օրը Պատրիարք հայրը «Ոտնալվայի» արարողության ընթացքում Անգլիկան Եկեղեցուն է պատիվ ընծայում, որ կարդա օրվա Ավետարանը: Ես մեկ ներկայացուցիչ ունեմ նաև Ս. Հակոբյանց Մեմարանում»:

Այցելություն Ծիրակ

Դեկտեմբերի 7-ի առավոտյան ժամը 09.00-ին Վեհափառ Հայրապետը Սամիր Քաֆիթի եպիսկոպոսի հետ և Մայր Աթոռիս միաբանների շքախմբով, մեկնեց Գյումրի՝ իր հայրական մխիթարությունը և զորակցությունը բերելու աղետյալ ժողովրդին, 1988 թվականի մեծ երկրաշարժի Թ տարելիցի տխուր առիթով:

Քաղաքի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ծիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը, մարզպետ Արարատ Գոմցյանը, քաղաքապետ Միքայել Վարդանյանը և մարզային, քաղաքային իշխանությունների բազմաթիվ անդամներ:

Այնուհետև ամբողջ շքախումբը ուղևորվեց Ծիրակի գերեզմանատուն՝ հարգանքի տուրք մատուցելու անմեղ զոհերի հիշատակին: Այստեղ Վեհափառ Հայրապետի գլխավորած շքախմբին միացան ԱԺ փոխնախագահ Արա Սահակյանը և մշակույթի նախարար Արմեն Սմբատյանը:

Գերեզմանատանը տեղի ունեցած հոգեհանգստից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը.

«Սգակիր եղբայրներ և քույրեր, հարազատներ.

Այս պահը վստահաբար հոգեկան ինքնամփոփումի մի պահ է յուրաքանչյուրիս համար: Այսօր եկել ենք մեր հարգանքի տուրքը ընծայելու նրանց, ովքեր ինը տարի առաջ մեզ նման շնչում էին, մեզ նման քայլում էին, մեզ նման զգում էին, մի խոսքով կյանքը լիովին ապրում էին և հանկարծ այդ ահավոր երկրաշարժի հետևանքով անշնչացան և, սակայն, մեզ համար չկորան: Մահանալը մի բան է, կորչելը՝ ուրիշ: Մահանալը մարդկային ճակատագրի մեջ կա: Բոլոր մարդիկ անպայման մի օր վերջ են գտնում իբրև մարդկային ֆիզիկական գոյություն, սակայն կորչելը ուրիշ բան է, անհիշատակ մնալը իսկական մահ է:

Այսօր ես մեր հարգանքն եմ բերում մեր պետական իշխանություններին, որոնք քաղաքամայր Երևանից հանուն պետությանը, հանուն մեր ազգային ժողովի, հանուն կառավարության, մեր մարզային իշխանության՝ մարզպետի կողմից գլխավորած, և բոլոր ներկայացուցիչների, ովքեր եկել են պետականորեն և որպես եկեղեցի մեր շուրջը բոլորված, հոգևորականների հետ միասին, այն զգացումը հայտնելու, որ նրանց մենք պետք է պահենք կենդանի մեր հիշողության մեջ: Ես այս տարի հոգեպես ուրախ եմ այն իմաստով, որ մեզ հետ է նաև ամբողջ Մերձին Արևելքի Անգլիկան եկեղեցիների ընդհանուր հոգևոր պետը, հանձին Սամիր Քաֆիթի եպիսկոպոսի, որ երեկ ժամանեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Երուսաղեմ քաղաքից,

որտեղ ունի իր Աթոռը: Քիչ հետո մեր Ցոթ-Վերք Սուրբ Աստվածածին եկեղեցում նա իր խոսքը կուղղի մեր հավատացյալ ժողովրդին:

Վերջացնելով, ցանկանում եմ ասել, թե գերեզմանները, որ այնքան բազմախումբ կերպով այսպես շրջապատել են մեզ, ինձ համար մահվան հիշատակարաններ չեն այնքան, որքան կյանքի հուշարարներ: Այս գերեզմանների ներքո թաղված անձինք մեզ հետ խոսում են այսօր և ասում՝ ապրե՛ք, կյանքն է կարևոր, մահը ողբալը ի՞նչ արժեք ունի, երբ մահը մենք չպիտի արժևորենք մեր կյանքում: Ամեն անգամ, երբ ես գտնվել եմ մի գերեզմանատանը, չեմ մտածել մահվան մասին. մտածել եմ իմ կյանքի մասին: Ամեն մեկս մտածենք, թե ի՞նչ կարող ենք անել, որ կյանքը արժևորվի, որ երբ մահը գա, տանի տանելիքը, բայց չկարողանա փչացնել մեր մեջ անմահականը, հոգեկանը:

Ես այսօր իմ ցավակցություններն եմ հայտնում, Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, մեր բոլոր զավակներին, այն ծնողներին, ովքեր իրենց ընտանիքներին և զավակներին կորցրեցին: Ես իմ ցավակցություններն եմ հայտնում Շիրակի մարզի մարզպետին, քաղաքային իշխանություններին, թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Փառեն Ծ. վրդ. Ավետիքյանին, քաղաքային իշխանություններին, մշակութային կազմակերպություններին, կրթական հաստատություններին, ասելով՝ Ո՛վ Տեր, այնպես արա, որ նրանց պարտքը չթողնենք՝ մեր կյանքը կրկնապատկելով, մեր ճիգը բազմապատկելով, որպեսզի նրանց պարտքը չզգացվի մեր ժողովրդի և մեր հանրապետության կյանքում: Թող Աստված նրանց հոգիները երկնքում պայծառացնի և մեր կյանքերը երկար անի, առողջ և պտղաբեր իր փառքի և մեր Հայրենիքի շինության, մեր եկեղեցու պայծառության համար հավիտյանս հավիտենից. ամեն»:

Գերեզմանատնից Նորին Սրբությունը նույն բազմամարդ և պատկառելի շքախմբով ուղևորվեց Ցոթ Վերք Սուրբ Աստվածածին եկեղեցի: Հընթացս Սուրբ Պատարագի առաջնորդ Փառեն Հայր Սուրբը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ իր մխիթարությունը բերելու և հայրական գոտեպնդիչ հորդորը հայտնելու Գյումրիի աղետահար ժողովրդին:

Նորին Սրբությունը, օրհնելով Շիրակի ժողովրդին, իր խոսքում ասաց.

«Սիրելյալ հավատացյալ և սակայն սգավոր եղբայրներ և քույրեր.

Այսօր իմ խոսքերը քաղում եմ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Աստվածաշնչյան խոսքերից, Ավետարանից, որտեղ Նա ասում է. «Ես եկի զի զկեանս ունիցիք, եւ առաւել եւս ունիցիք»: «Ես եկա, որպեսզի դուք կյանք ունենաք և առավել կյանք ունենաք»: Ի՞նչ էր ուզում ասել Երկնավոր Վարդապետը: Մի՞թե մարդիկ կյանք չունեին Նրա գալուց առաջ, Նրա երկրում ապրած օրերին: Նա լավ գիտեր, որ կյանք պիտի լիներ նաև Իր Հարությունից հետո: Ապա ինչո՞ւ է ասում, թե «Ես եկա, որ կյանք ունենաք»:

Մարդիկ կյանք ունեին: Նա եկավ, որպեսզի մարդիկ այնպիսի կյանք ունենան, որ այդ կյանքի իմաստը հասկանան: Կյանքը արժևորեն: Ապրելը, կյանքը սոսկ մի ընթացք չէ ծնվելու, աճելու և մեռնելու: Բույսերն ու անասուններն էլ ունեն այդ կյանքը: Ծնվում են, մեծանում, հրճվում և ապա

գնում: Եթե կյանքը այդ է, այն ժամանակ Քրիստոս իր գալու և մարդկանց կյանք տալու առաքելության մեջ անիմաստություն գործած պետք է լիներ, այլ կյանքը կյանքին մեջ, հոգևոր կյանքը, այնպիսի արժեքների կապված կյանքը, որ երբ մահը գա, կյանքը չգնա: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը մահացավ, սակայն մի՞թե մահով ավարտվեց նրա կյանքը: Նա այն կյանքը, որ ապրեց իր երկրավոր ֆիզիկական կյանքի ժամանակը անցկացնելուց և իր ֆիզիկական քայքայումից հետո, իր ապրած կյանքը մնաց, քանզի հավիտենական արժեքների կյանք էր դա և ոչ թե ժամանակավոր, անցավոր և սոսկ երկրավոր կյանքի պայմաններով պայմանավորված: Ո՞ւր է Մեսրոպ Մաշտոցը: Օշական գնացեք և մի քար կտեսնեք, որի տակ նրա ոսկորներն են: Բայց դա՞ է Մաշտոցը: Իր գիրը, իր ստեղծածը, իր ապրածը կյանքի մեջ Աստծու հետ հաղորդության ընթացքը և մեզ Աստվածաշունչ Մատյանի իր տվչությունը ապրեցնում են ոչ միայն իրեն, այլև ապրեցնում են գալիք սերունդներին: Հետևաբար կյանքը միայն ուտել, խմել, հաճոյանալ չէ: Առավել կյանքն է, որ մեզ արժևորում է: Եթե դրանք հանենք մեր կյանքից, ապա մեր կյանքի լինել կամ չլինելը միանշանակ կլինի: Ի՞նչ գեղեցիկ է Աստվածաշունչ Մատյանի այն տողը, որ ասում է. «Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս վայրի ծաղիկ այնպէս ծաղկէ, շնչէ ի նմա հով եւ ոչ է եւ ոչ ևս երևի տեղի նորա»: «Ինչպես վայրի ծաղիկը կծաղկի, հովը կփչի, նա կգնա և հետքն անգամ չի մնա»: Ա՞յդ է մարդը. ո՛չ: Աստվածաշունչը չի ասում, որ մարդը խոտի նման է, այլ նրա օրերն են խոտի նման: Մեր կյանքը ժամանակավոր է: Ժամանակով և տարածությամբ պարփակված է մեր կյանքը: Կյանքը, որ Աստված մեզ տվեց, այդ չէ, այլ այն պատկերը, որ դրեց մեր մեջ. հավիտենական արժեքների գիտակցություն: Ես ձեզ մեկ օրինակով եմ բացատրելու այսօր իմ միտքը: Առեք մի քար՝ լեռից պոկված: Ինչ իմաստ ունի այդ քարը: Բայց եթե այդ քարի վրա մի արվեստագետ քանդակի, ապա այդ քարը կերպարանք կառնի, իմաստ կառնի և կդադարի քար լինելուց, կդառնա խոսուն արձան, անձ, դաղափար, արժեք, ձգտում, տեսիլք: Քարը կնվաճվի հոգիով: Հետևաբար, մենք կոչված ենք մեր կյանքի համար դրված պաստառի վրա մեր կյանքը դրոշմելու: Աստված տվել է բոլորիս ծնելու, աճելու կարողությունը: Դատաստանն է. ես ի՞նչ եմ անում այդ տարածաշրջանում, ժամանակաշրջանում, ինչպե՞ս եմ գծում իմ պատկերը, ի՞նչ արարքներ եմ անում, ի՞նչ գործեր եմ անում, որ երբ ես գնամ, պաստառի վրա իմ նկարը մնա իբրև հայոց պատմության մի մասնիկ:

Սիրելի հարազատներ, այս մտածումները ես այսօր ուզեցի ձեզ հետ բաժանել, որովհետև այսօր մենք եկել ենք այստեղ ահավոր մի մահվան մտապատկերացումը վերապրելու: Բայց դա տխրության և ինքնահուսահատության առիթ պետք չէ լինի մեզ համար: Մահը պատահելու է յուրաքանչյուրիս. մեկին կանուխ, մյուսին՝ ոչ, մեկին հանկարծակի, մյուսին՝ երկար տարիներ անց: Դրանք մահվան ձևերն են: Կյանքը անսպասելի է, աննախատեսելի: Հանկարծ մի բոպեում մի երակ կխփվի մեր ուղեղում, և մենք կդադարենք լինելուց: 1988-ի դեկտեմբերի 7-ին այս քաղաքը եռում էր շեն կյանքով և ժամը 11.41-ին հանկարծ անսպասելի, աննախատեսելի մի երկրաշարժում գետնին հավասարեցրեց և գետնի տակ թաղեց ավելի քան 25.000 մարդկանց: Դեռ երեկ, առավոտյան ժամը 10-ին, Ռուսաստանի

Դաշնության մեջ մի օդանավ ընկավ և ավելի քան 100 մարդ մահացավ: Ես ցավակցական հեռագիր ուղղեցի թե՛ Ռուսաստանի նախագահին և թե՛ իմ սիրեցյալ եղբորը՝ Ալեքսիյ Բ Պատրիարքին:

Ողբալ մահը՝ կյանքն արժևորելու ձևը չէ: Հիշել նրանց մահը կյանքի համար, մեր կյանքի, մեր նոր երեխաների կյանքի համար. սա է մեր պարտքը: Անիծել խավարը ի՞նչ արժեք ունի, մոմ վառիր և ոչ թե առավոտից մինչև երեկո ասա՝ «այս ի՞նչ խավար է»: Մահը կա, խավարն էլ կա, դա մարդկային գոյության մաս է կազմում: Մեր արժեքը դրանց հաղթելն է կյանքով, այնպիսի կյանքով, որ մահը չկարողանա տանել, և կարողանան ասել. «Մա՛հ, ո՞ւր է հաղթությունդ»: Քրիստոս հարություն առավ և մեզ կյանք տվեց:

Մենք շատ մահ տեսանք: Հայությունը շատ մահ է տեսել: Ցեղասպանության ժամանակ մեկ ու կես միլիոն հայեր մահացան: Հայերը կմահանան, ինչպես բոլոր մարդիկ, սակայն հայությունը՝ ո՛չ, որովհետև հայությունը ապրելուց վեր է: Արժևոր ապրել՝ է իմաստ դնել կյանքի մեջ, հավատք, սեր, ստեղծագործություն, մշակույթ, հայրենասիրություն, աշխատասիրություն... անուններն են սրանք կյանքի: Այլապես թույլ տվեք ինձ ասելու, որ ապրողներ կան, որոնք ինձ համար ապրում են միայն: Ապրելն ավելի է, քան գոյություն պահելը: Այս է պատգամը մեր նոջեցյալների:

Երեխաներ, եթե մեկն եք անում, ապա երկուսը պետք է անեք, նրանց տեղն էլ, որպեսզի նրանց բացը չթողնեք: Եթե Աստված ձեզ ձիրք է տվել, ապա օգտագործեք, ծաղկեցրեք ցորենի հատիկի պես, որ ընկել է ձեր անձի մեջ: Աճեցրեք այն, թող աճի և բազում-բազում ցորենի հատիկներ տա: Մենք պետք է կյանքին նայենք և ոչ թե մահվանից նվաճվենք և կյանքով հաղթենք մահվան, ինչպես ասել է մեր 5-րդ դարի Եղիշե մատենագիրը. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

Ես Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց խոստացել եմ, որ ինձ համար ոչ մի Դեկտեմբերի 7 չի լինի, որ ես չանցկացնեմ աղետի գոտում իմ ժողովրդի հետ: Աստված թող ինձ ուժ տա, որ ես միշտ կարողանամ այս օրը ձեզ հետ լինել՝ բերելու համար ձեզ մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից օրհնությունը բոլոր այն հայերի, ովքեր ասում են. «Կյանքին կապվեք, հուսահատությունը մահ է մահից առաջ: Հույսով ապրելը հաղթանակի ճանապարհն է»:

Մենք այլևս մի ժողովուրդ ենք, որ սեփական դիմագիծ ունենք: Պետք է թողնենք այն ներքին մաշող, սպառող տարակարծությունները, որոնք մեր անձն են սպանում կյանքի մեջ: Քանի՞ տարի ենք ապրելու, որ բամբասանքներով, դժգոհություններով, զրպարտություններով թունավորում ենք մեր կյանքը: Աստված բարիք է տվել մեզ: Արժեցնենք այդ բարիքը և ոչ թե փչացնենք այդ՝ գնալով այնպիսի բաների հետևից, որոնք կյանքում կյանքն են սպանում:

Այսօր պետք ունենք վերարթնանալու, մեր հայության մեջ վերաբյուրեղանալու: Աստծու տված այս անկախությունը կարողանանք ամրապնդել մեր միասնությամբ: Շատ թշնամիներ ունենք, մի՛ ուրախացրեք նրանց, այլ՝ ամաչեցրեք նրանց ձեր միությամբ: Այն ժամանակ, երբ հայության մեջ անհամաձայնություն լինի, մեր թշնամիները կուրախանան և կծիծաղեն մեզ վրա:

Սիրելինե՛ր, ամբողջ սրտով ձեզ հետ եմ: Լծվենք աշխատանքի՝ վերակառուցելու համար: Ճիշտ է, ընթացքը դանդաղ է: Այսօր մենք և մեր պետության սիրելի ներկայացուցիչները մեկ անգամ ևս ոգևորված և ներշնչված պետք է վերադառնանք ձեր այս հավատարմության գեղեցիկ երևույթով և դուք ձեր իշխանությունների և հոգևորականների շուրջը բոլորված, հոգևոր. աշխարհիկ, մշակութային կյանքի իրագործումներով պիտի ասենք, որ 1988-ի Դեկտեմբերի 7-ը չի կարող ջնջել մեր Գյումրիի և հյուսիսային Հայաստանի փառքը: Մենք կանք և պետք է մնանք: Պետք է ստեղծագործենք Աստծու փառքին և մեր ազգի շենության համար հավիտյանս հավիտենից. ամեն:

Այսօր, սիրելի եղբայրներ և քույրեր, իմ խոսքը փակելուց հետո ես ուրախ եմ և մխիթարական եմ գտնում այն երևույթը, որ այնպես զուգադիպվեց, որ մի պատմական հյուր ունեցանք մենք երեկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ամբողջ Միջին Արևելքի արաբական երկրների երուսաղեմում իր Աթոռն ունեցող Անգլիկան Եկեղեցիների պետը իր առաջին պաշտոնական այցելությունը տվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, և այսօր եթե բնական կարգին հետևած լինեի, պետք է Էջմիածնում ևս իմ խոսքն ուղղեի, և ինքն էլ իր խոսքը պետք է ուղղեր մեր ազգին և Եկեղեցուն Էջմիածնի մեջ: Բայց այսօր ես չէի կարող Էջմիածնում մնալ, և ինքը սիրահոժար եկավ ինձ հետ»:

Ապա Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր հյուրին՝ Արաքական երկրների Անգլիկան Եկեղեցու պետ Սամիր Քաֆիթի եպիսկոպոսին, և հրավիրեց նրան իր օրհնությունները տալու Գյումրիի հավատացյալ ժողովրդին:

Սրբազանը իր սրտակցությունը, զորակցությունը հայտնեց աղետյալ ժողովրդին և մաղթեց, որ ուժ գտնեն ու շուտափույթ բնականոն ընթացքի մեջ դնեն կյանքը.

«Սիրեցյալ եղբայրներ և քույրեր.

1988-ի Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը ոչ միայն դժբախտություն էր Հայաստանի համար, այլ, վստահեցնում եմ ձեզ, որ նաև դժբախտություն էր ամբողջ քրիստոնյա աշխարհի համար: Եվ մենք, որպես քրիստոնյաներ, կիսեցինք ձեր տառապանքն ու ցավը: Պողոս Առաքյալն ասում է, որ Աստված ամբողջ մարդկությունը ստեղծեց մեկ ապրումից և չկան տարբեր ապրումներ, կա մեկ սեր և մեկ ստեղծագործություն Աստուծո: Եթե մարմնի որևէ անդամ ցավում է, ապա ցավում է ողջ մարմինը, որովհետև ցավը չունի աշխարհագրական և պատմական տարածքներ: Մենք տառապել ենք Բեթղեհեմի անմեղ մանուկների կոտորածի համար, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոս ծնվեց: Մենք հաճախ հիշում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդը, սակայն երբեմն մոռանում ենք այդ անմեղ մանկանց կոտորածը, որը պետք է հիշենք, քանզի այդ ցավ է: Եկեղեցու անվանումներից մեկը «նահատակություն» է, որը շատ բնորոշ է այս պահին, քանզի Եկեղեցին իրապես ապրում է վկաներով և նահատակներով: Դուք, որ քրիստոնյա առաջին ազգն եք, ցույց եք տվել, որ կարող եք նահատակությամբ ապրել: Ցեղասպանություն տեսաք, սակայն ցույց տվեցիք, որ կարող եք ապրել: Ես արտահայտում եմ այսօր իմ ցավակցությունները, սակայն՝ հուսո: Հույսն է ապրեցնում մարդուն»:

ՌՈՒՍԻՍԱՆՔ ԴՎԵՌԵՇՏ



ԳՅՈՒՄՐԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Հավարտ Սուրբ Պատարագի և հոգեհանգստյան արարողության Վեհափառ Հայրապետը իր հյուրի և ամբողջ շքախմբի հետ դիտեց քաղաքի ավերակված Ամենափրկիչ եկեղեցին, ապա այցելեց նորաբաց Ֆրանսիական դպրոց, որից հետո մեկնեց Ազատան գյուղ՝ դիտելու տեղի վերանորոգվող եկեղեցու աշխատանքները:

Երեկոյան Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Այցելություն Ծիծեռնակաբերդ

Դեկտեմբերի 8-ին, առավոտյան ժ. 10.00-ին, Վեհափառ Հայրապետը և Գեր. Տ. Սամիր Քաֆիթին, միաբանության ուղեկցությամբ, մեկնեցին Ծիծեռնակաբերդ, ուր Նահատակաց հուշարձանին ծաղկեպսակ դրեցին, որից հետո կատարվեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակության հոգեհանգիստ: Ապա նախ արաբերեն, հետո՝ անգլերեն լեզուներով հոգեհանգստյան աղոթք կարդաց նաև Տ. Սամիր Քաֆիթի Եպիսկոպոսը:

Հոգեհանգստից հետո Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ:

Այնուհետև, ուղեկցությամբ Տ. Ներսես Արքեպս. Պոզապալյանի և Տ. Հայկազուն Ծ. վրդ.Նաջարյանի, պատվավոր հյուրը այցելեց Ճեղասպանության թանգարան, ուր թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը համառոտ ներկայացրեց ցեղասպանության պատմությունը և ցուցադրվող նմուշները:

Վերջում մեծահարգ հյուրը գրառում կատարեց պատվավոր հյուրերի հուշամատյանում:

Այցելություն Խոր Վիրապ և Գեղարդավանք

Ծիծեռնակաբերդից Գեր. Տ. Սամիր Քաֆիթին, միաբանների ուղեկցությամբ, այցելեց Ս. Խոր Վիրապ վանք, ուր նրան դիմավորեցին վանահայր Տ. Մխիթար քհն. Սարիբեկյանը և քահանա հայրերը: «Հրաշափառի» երգեցողությամբ Սրբազան Եպիսկոպոսը մտավ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի և գոհաբանական աղոթք կարդաց, որից հետո վանահայրը հակիրճ ներկայացրեց Վանքի հիմնադրման պատմությունը և Խոր Վիրապի սրբազան ավանդությունը:

Նույն օրը Սրբազան Եպիսկոպոսը այցելեց նաև Ս. Գեղարդա վանք: Այստեղ նրան դիմավորեցին Ս. Գեղարդի վանահայր Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը և հոգևոր դասը: Հոգևոր դասի անունից ողջույնի խոսք ասաց Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը՝ իր խոսքում շեշտելով Հայց. Առաքելական Եկեղեցու և Անգլիկան Եկեղեցու բարեկամական հարաբերությունների վաղեմությունը: Այնուհետև Տ. Մովսես ավագ քահանան ներկայացրեց Ս. Գեղարդ վանքի պատմությունը, որից հետո վանական սեղանատանը տրվեց ճաշ՝ ի պատիվ Սրբազան Եպիսկոպոսի:

Երեկոյան Գեր. Տ. Սամիր Քաֆիթին վերադարձավ Մայր Աթոռ:

Այցելություն Ազգային Ժողով և Մատենադարան

Հաջորդ առավոտյան, ժամը 11.00-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Գեր. Տ. Սամիր Քաֆիթիի և ուղեկցությամբ Մայրավանքի միաբանների շքախմբի, այցելեց Ազգային Ժողով: Այստեղ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ազգային Ժողովի նախագահ պրն. Բաբկեն Արարքցյանը և պաշտոնական այլ անձինք:

Ազգային Ժողովի ընդունելությանց ներսում Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր հյուրին և անդրադարձավ Նրա գալստյան նպատակին: Ապա պրն. Բաբկեն Արարքցյանը ողջույնի խոսքով դիմեց Գեր. Տ. Սամիր Քաֆիթիին: Նա Անգլիկան Եկեղեցու պաղեստինցի բարձրաստիճան հոգևորականի այցը Հայաստան նկատեց իբրև հայ և պաղեստինցի ժողովուրդների միջև եղբայրական դրսևորումների արտահայտություն:

Պատասխան խոսքում Գեր. Տ. Սամիր Քաֆիթին ողջունեց Հայաստանի Հանրապետության անկախությունն ու վերածնունդը և պետության ու Եկեղեցու միմյանց նեցուկ լինելու կամքը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Սամիր Քաֆիթի եպիսկոպոսի հետ այցելեց Մատենադարան: Այստեղ Մատենադարանի տնօրեն պրն. Սեն Արևշատյանը Վեհափառ Հայրապետի հյուրին համառոտակի ծանոթացրեց Մատենադարանում պահվող ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով ձեռագրերին:

Երեկոյան Մայր Տաճարում տեղի ունեցավ ողջերթի արարողություն, որից հետո Սամիր Քաֆիթին մեկնեց Հայաստանից:

ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ

***

Վերադարձից երկու օր անց Մայր Աթոռում ստացվեց Գեր. Տ. Սամիր Քաֆիթիի ընդարձակ հեռագիրը, որը զետեղում ենք ստորև ամբողջությամբ.

«Այս պատմությունը կանխագուշակելի չէ, որովհետև այն ուղղակիորեն մեզ համար սահմանված մի բան չէ»:

Սա մի քաղվածք է Նորին Սրբություն Գարեգին Ա-ի խոսքից՝ ասված Նյու Յորքի Փրինսեթոն ակումբում 1990 թվականի մայիսի 18-ին: Այս գաղափարը Վեհափառ Հայրապետի հիշողության մեջ խորապես արմատավորվել է դեռևս 1975 թվականին, երբ կատարվում էր Մեծ եղեռնի հիշատակության վաթսունհոգեշունչ տարելիցը:

301 թվականին Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Վերցնելով խաչը և հետևելով Տեր Հիսուս Քրիստոսին՝ դուք իբրև ազգ և իբրև Եկեղեցի կամավոր կերպով հետևեցիք «տառապանքի ճանապարհին»: Այդպիսով մարտիրոսությունը դարձավ ձեր հավատքի ուղենիշը:

Աստծո Եկեղեցին հաճախ սահմանվել է իբրև.

1. Համախմբում, ժողովք՝ կոչված Աստծո կողմից,
2. Եղբայրակցություն՝ կոչված ընկերակցության և բաժնեկցության համար,
3. Պատարագ՝ կոչված երկրպագության և աղոթքի համար,
4. Սարկավագություն՝ կոչված ծառայության՝ միմյանց ոտքերը լվանալու համար,
5. Մարտիրոսություն՝ կոչված զոհաբերության, տառապանքի և հանուն հավատքի նահատակվելու համար:

Հայ ազգը իր պատմության ընթացքին ցուցաբերել է նորկտակարանյան